Դրամաշնորհային աջակցություն «Մարդկային անվտանգության «Grassroots» ծրագրերի» համար ՖS 2019.

Ստորագրվեց «Գեղարքունիքի մարզում բնակիչների եկամուտների ավելացման նպատակով մասնագիտական ուսումնական կենտրոնի հիմնման» ծրագիրը

2020 թ. մարտի 18-ին, Հայաստանում՝ Ճապոնիայի դեսպանությունում, տեղի ունեցավ «Գեղարքունիքի մարզում բնակիչների եկամուտների ավելացման նպատակով մասնագիտական ուսումնական կենտրոնի հիմնման» ծրագրի 54,222 ԱՄՆ դոլար արժողությամբ դրամաշնորհային պայմանագրի ստորագրումը՝Մարդկային անվտանգության «Grassroots» ծրագրերի համար դրամաշնորհային աջակցության շրջանակում: Դրամաշնորհային պայմանագիրը ստորագրվեց ՀՀ-ում Ճապոնիայի դեսպան պարոն Ջուն Յամադայի և «Տարածքային զարգացման և հետազոտությունների կենտրոն» հասարակական կազմակերպության նախագահ, պարոն Մարտին Բաղեյանի կողմից:

Ծրագրի նպատակն է Ծովագյուղում հիմնել մասնագիտական ուսումնական կենտրոն և տրամադրել վերջինիս համար անհրաժեշտ սարքավորումները: Այսպիսով, գյուղացիները հնարավորություն կունենան մասնակցելու գյուղատնտեսության և տուրիզմի վերաբերյալ մասնագիտական վերապատրաստման դասընթացներին, որոնք ոչ միայն կնպաստեն Գեղարքունիքի մարզում բնակիչների եկամուտների ավելացմանը, այլ նաև տարածաշրջանի տնտեսական գործունեության դիվերսիֆիկացմանը: Արդյունքում, դասընթացների 464 մասնակիցները օգուտ կքաղեն այս ծրագրից: Ակնկալվում է, որ երկարաժամկետ հեռանկարում ծրագիրը իր դրական ազդեցությունն կունենա Գեղարքունիքի մարզի (21000 բնակիչներ), ինչպես նաև հարակից Տավուշ և Լոռի մարզերի բնակչության համար:





Դեսպան Յամադան և «Տարածքային զարգացման և հետազոտությունների կենտրոն» հասարակական կազմակերպության նախագահ, պարոն Մարտին Բաղեյանը ստորագրեցին դրամաշնորհային պայմանագիրը